Արձանագրություն N 2

«ՀՀ ԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-23/27» ծածկագրով ընթացակարգի գնահատող
հանձնաժողովի նիստի
(Կաթնասունների տուբերկուլոզի ալերգիկ ախտորոշիչ)

ք. Երևան, Մ. Մկրտչյան 5 28 ապրիլի 2023թ. Ժամը՝ 12:00

Մասնակցում էին՝

Գնման գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Մ. Կարապետյան

Գնման գնահատող հանձնաժողովի անդամներ՝ Մ. Խաչատրյան, Ա.Դանիելյան

ԷԱՃ ընթացակարգի քարտուղար՝ Ա. Ղարիբջանյան

1. ԷԱՃ ընթացակարգի հայտերի բացման մասին

1. Ընդունել ի գիտություն, որ՝

ա. «Կաթնասունների տուբերկուլոզի ալերգիկ ախտորոշչի» ձեռքբերման հրավերը 10.04.2023թ. հրապարակվել է «gnumner.am» կայքի գնումներ կատարելու ԷԱՃ ընթացակարգի հայտարարություններ բաժնում, ինչպես նաև eauction.armeps.am էլեկտրոնային կայքում:

Հայտերի ներկայացման վերջնաժամկետ է սահմանվել 20.04.2023թ.:

բ.Հակադարձ աճուրդը կայացել է 2023 թվականի ապրիլի 21-ին https://eauction.armeps.am էլեկտրոնային կայքի միջոցով: **ՀՀ ԷՆ-ԷԱՃԱՊՁԲ-23/27 ծածկագրով ընթացակարգի հայտերը բացվել են 21.04.2023թ., ժամը՝ 12:00-ին:**

գ.Euction.armeps.am համակարգի միջոցով հայտ են ներկայացրել հետևյալ կազմակերպությունները.

Հ/h	Մասնակցի անվանումը	Մասնակցի գտնվելու վայրը
1.	«ԷՅԲԻԷՖ» ՍՊԸ	ք.Երևան Աբովյան փ./23, հեռ. (094)277400, abf.llc@mail.ru

2. Տվյալներ բացված հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին

2.1 Նվազագույն գնային առաջարկ ներկայացրած մասնակցի հայտում առկա էին անհամապատասխանություններ հրավերի պահանջների նկատմամբ, մասնավորապես, ներկայացված հայտում իրական շահառուների մասին տեղեկատվության մասին հղումը սխալ էր ներկայացված, տեխնիկական բնութագրում նշված չէր ձեռքբերվող ապրանքի ֆիրմային անվանումը, ապրանքային նշանը, մակնիշը, արտադրողը, ինչպես նաև առկա էր տեխնիկական վրիպակ տեխնիկական բնութագրի 8^0 C-ի հետ կապված, հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշման 41-րդ կետը, հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցրել է նիստը՝ առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել անհամապատասխանությունները:

Անհամապատասխանությունները սահմանված ժամկետում շտկվել են մասնակցի կողմից:

3. Տեղեկատվություն հայտերի հարցումների և պատասխանների վերաբերյալ

Հարցումներ չեն ստացվել:

4.Մասնակիցի կողմից ներկայացված գնային առաջարկների վերաբերյալ՝

4.1 Մասնակցի գնային առաջարկը հետևյալն է.

Չափա-բաժին	Ապրանքի անունը	Մասնակցի անունը	Գինը (Առանց ԱՀՀ)	Գինը (ներառյալ ԱՀՀ)	Նախահաշվային գինը
1.	Կաթնասունների տուբերկուլոզի ալերգիկ ախտորոշիչ	«ԷՅԲԻԷՖ» ՍՊԸ	1353332	1623998.40	1624000

5. Ընթացակարգի գնահատման արդյունքների վերաբերյալ

5.1 Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշման 42-րդ կետը՝ մասնակցի կողմից ներկայացված հայտը գնահատվել է բավարար:

Գնահատող հանձնաժողովը որոշեց.

ա/ ընթացակարգի հաղթող մասնակից ճանաչել՝ «ԷՅԲԻԷՖ» ՍՊԸ-ին:

5.2 Առաջնորդվելով «Գնումների մասին» օրենքի 10-րդ հոդվածի 4-րդ կետի 1-ին ենթակետով՝ անգործության ժամկետ չի սահմանվի: Համաձայն «Գնումների մասին» օրենքի 36-րդ հոդվածի՝ ընտրված մասնակցի հետ կկնքվի պայմանագիր:

Ընդունվել է որոշում՝ կողմ-3, դեմ-0

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ _____ Մ. Կարապետյան

Հանձնաժողովի քարտուղար _____ Ա. Ղարիբջանյան

Անդամներ՝ _____ Մ. Խաչատրյան

_____ Ա.Դանիելյան